ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2026 թվականի ապրիլի 23-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-26/16 գնման պայմանագրի

ք. Երևան «07» մայիսի 2026թ.

«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Բ. Կիրակոսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՖ ԷՍ ՓԻ ԸԴՎԱՅՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Բադալյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 23-ին կնքված N ԵԱ-ԳՀԾՁԲ-26/16 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 7.5 և 7.16 կետերը և հաշվի առնելով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման պահանջը, նախատեսվել են ֆինանսական միջոցներ, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության և Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար հատկացված 1,680,000.00 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, շրջանակներում գնում կատարելու նպատակով Կողմերը որոշեցին.

1.1. Հաստատել Պայմանագրի Հավելված N 2-ով ներկայացված «Վճարման ժամանակացույց*»-ը համաձայն՝ սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | ք. Երևան, 0010, Վարդանանց փակուղի 8 |
| «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 2050022591611001 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 02835031 |
| Տնօրեն՝ __________ Բ. Կիրակոսյան | Տնօրեն՝ __________ Ռ. Բադալյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N 1*
*2026 թվականի ապրիլի 23-ին կնքված*
*N ԵԱ-ԳՀԾՁԲ-26/16 ծածկագրով պայմանագրի*
*«07» Տպրիլ 2026թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | չ/մ | ընդհանուր քանակը | վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | Ընդհանուր գինը |
| 1 | 79211160/501 | Ֆինանսական աուդիտի ծառայություններ | դրամ | 1 | - | - | - | - | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 | 1,680,000.00 |

*Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հրապարակված, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Երևանի ավտոբուս» ՓԲԸ | «ԷՖ ԷՍ Փի Ըդվայս» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 | ք. Երևան, 0010, Վարդանանց փակուղի 8 |
| «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 163078035496 | Հ/Հ 2050022591611001 |
| ՀՎՀՀ 00875439 | ՀՎՀՀ 02835031 |
| Տնօրեն ________ Բ. Կիրակոսյան | Տնօրեն ________ Ռ. Քադալյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |